

ՍՈՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ (ԵՊՀ)

ՀԱՅԱՏԱՌ ԵՎ ՀՈՒՆԱՏԱՌ ԹՈՒՐԹԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ. ՀԱՅՈՑ ԵՎ ՀՈՒՆԱՑ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՏԱՌ ԵՎ ՀՈՒՆԱՏԱՌ ԹՈՒՐԹԵՐԵՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Հայատառ և հունատառ թուրքերեն գրականությունը սկիզբ է առել 14-րդ դարում՝ սկզբնական շրջանում ներկայանալով ձեռագրերի, իսկ տպագրության գյուտից հետո տպագիր գրականության և մամուլի տեսքով: Այս գրականության ուսումնասիրությունը արդիական և կարևոր է այն պատճառով, որ մեզ հասած նմուշները՝ ի տարբերություն արաբատառի՝ ճշգրիտ կերպով արտահայտելով 14-20-րդ դարերի թուրքերեն խոսակցական լեզուն, դրա առանձնահատկությունները, ի ցույց են դնում նաև նրա տարբերությունները մյուս թուրքական ժողովուրդների լեզուներից: Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք պարզել այն նախադրյալները, որոնք հիմք են հանդիսացել հայատառ և հունատառ գրականության ստեղծմանը, հասկանալ՝ ովքեր էին այդ գրականության ստեղծողները և հայատառ ու հունատառ տեքստերից քաղված օրինակների միջոցով կփորձենք ցույց տալ հայկական և հունական այբուբենների գործածությունը թուրքերենի գրության համար:

Նախևառաջ նշենք, որ բազմաէթնիկ և բազմամշակութային Օսմանյան կայսրության գոյության ընթացքում լեզուն սովորաբար կիրառվող այբուբենի փոխարեն այլ այբուբեններով գրելու սովորույթը բավական զարգացած էր, ինչը հիմնականում կապված էր թուրքախոսների կրոնական պատկանելիության հետ¹: Նշենք, որ դեռևս

¹Irakleous S., On the Development of Karamanlidika Writing Systems Based on Sources of the Period 1764-1895, Mediterranean Language Review, Vol. 20, Harrassowitz Verlag, 2013, p. 57.

միջնադարում գիրն ու գրականությունը, հատկապես այբուբենն ու տառերը սրբագործվել են ու սրբազան բովանդակություն ստացել: Տառը սուրբ է եղել՝ սերտ կապված լինելով տվյալ կրոնի սուրբ գրքի՝ քրիստոնյաների մոտ Աստվածաշնչի, մուսուլմանների մոտ Ղուրանի, մյուս ժողովուրդների մոտ էլ իրենց սուրբ գրքերի հետ²: Հետևաբար Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյա թուրքախոս հայերը և հույները, ելնելով իրենց կրոնական պատկանելիությունից, գրել են համապատասխանաբար հայատառ և հունատառ թուրքերենով³:

Սրա մեկ այլ պատճառն այն է, որ արաբական այբուբենում բաղաձայնների և ձայնավորների սղության պատճառով դժվար է արտահայտել թուրքերենի հնչյունական համակարգի բոլոր հնչյունները⁴:

Հայատառ թուրքերենի ձևավորման նախադրյալները

15-18-րդ դարերում Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը սոցիալական և ֆիզիկական հետապնդումների և բռնի թուրքացման, իսլամացման է ենթարկվել, որի հետևանքով արևելյան վիլայեթներում՝ իրենց պատմական հողերի վրա ապրող ավելի քան կես միլիոն հայեր դարձել էին թուրքախոս: Լեզուն կտրելու, մահվան սպառնալիքով արգելված էր հայերեն խոսելը, անգամ քարոզը եկեղեցիներում թուրքերեն էր հնչում⁵: Հայերը թուրքերեն էին խոսում թե տանը՝ իրենց ընտանիքներում, թե դրսում՝ փողոցում կամ շուկայում⁶: Վերոնշյալ պայմանների արդյունքում, որքան էլ հայերը ստիպված են եղել հրաժարվել հարազատ հայկազյան լեզվից, այնու-

² Փափազյան Հ., Մերոպատառ այլալեզու գրականության մասին, Բանբեր Մատենադարանի, № 7, Երևան, 1964, էջ 211:

³ Lewis B., The Emergence of Modern Turkey, London, 1968, p. 425-426.

⁴ Sülükçü Y., Türkçe Öğretim Materyali Olarak 19. Yüzyılda Ermeni Harfli Türkçe İle Yazılmış “Turkish Proverbs...” Kitaplarının Karşılaştırmalı İncelemesi, International Journal of Language Academy Vol. 5/4, August 2017, p. 340.

⁵ Ստեփանյան Հ., Հայատառ թուրքերենի դերը Օսմանյան կայսրության ժողովուրդների առաջընթացի մեջ, էջ 76, <http://genhist.asj-oa.am/182/1/76-83.pdf>

⁶ Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 261:

ամենայնիվ, ամուր կառչած են մնացել հայոց գրին և շարունակել են գրել ու կարդալ միայն մեսրոպյան գրերով⁷ և ծնունդ են տվել հայատառ թուրքերեն գրականությանը: Այն կոչված էր հայերին գերծ պահելու վերջնական ուժացումից, բացի այդ նրանց հաղորդակից դարձնելու հայ ազգային զարթոնքին և մտավոր վերելքին⁸, այն զարգացել է նաև որպես քրիստոնյա հայ ժողովրդի հետ գրավոր լեզվի միջոցով կապ հաստատելու և ինքնաարտահայտման, հայ մշակույթի պահպանման և օտարացման դեմ պայքարի միջոց⁹:

Հայատառ թուրքերենը օտար է միայն լեզվով, իսկ հասարակական-քաղաքական բովանդակությամբ այն կազմում է հայ մշակույթի ուշագրավ մի հատվածը¹⁰, արտացոլելով հայ ժողովրդի տնտեսական, մշակութային, քաղաքական կյանքը¹¹:

Թուրքախոս հույները (կարամաններ) և հունատառ թուրքերեն (կարամաներեն, կարամանլիդիկա) գրականության ձևավորումը

Հույն ժողովրդի մի մասն են կազմում կարամանները, ովքեր Անատոլիայում ապրող, թուրքախոս ուղղափառ քրիստոնյաներ էին և որպես գրավոր լեզու կիրառում էին հունական տառերով գրված թուրքերենը¹²: Կարամանները թուրքերենից բացի որևէ այլ լեզու չիմանալու պատճառով կրոնական արարողությունները նույնիսկ թուրքերենով էին իրականացնում¹³:

⁷Փափազյան Հ., նշվ. աշխ., էջ 210:

⁸Ստեփանյան Հ., Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարաններ, էջ 251, [http://hpj.asj-oa.am/3626/1/2005-2\(250\).pdf](http://hpj.asj-oa.am/3626/1/2005-2(250).pdf)

⁹ Pamukcayan K., Ermeni harfli Türkçe metinler, İstanbul, 2002, էջ XI-XII.

¹⁰Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյանի նորահայտ երգիծավեպը, Պատմաբանասիրական հանդես, հ. 3, Երևան, 1971, էջ 17:

¹¹ Ըղրաթբաշյան Մ., Բելիարի հայատառ թուրքերեն երկերը, 1972, էջ 55, <http://lraber.asj-oa.am/3079/1/55.pdf>

¹² Balta E., Gerçi Rum isek de, Rumca bilmez Türkçe söyleriz. Karamanlılar ve Karamanlca edebiyat üzerine araştırmalar, 3. basım, İstanbul, 2012, s. 117.

¹³ Ağca F., Hristiyan Karamanlı Türkleri ve Karamanlı ağzı üzerine, №11, Türkbilgi, 2006, s. 4.

Կարամանների բնակության սահմանները մոտավորապես տարածվել են Տրապիզոն-Եփրատ-Տավրոսի լեռներ-Մելնիկա գծից արևմուտք ընկած տարածքներում՝ հատկապես Կայսերիի, Նեշեհիրի, Նիդդեի, Քոնյայի շրջաններում, Սև ծովի առափնյա շրջաններում, Ստամբուլում և այլուր¹⁴։ Թուրքախոս ուղղափառ քրիստոնյա այս հասարակությանը առաջին անգամ կարամաններ անունը տվել է գերմանացի ճանապարհորդ Հանս Դերնշվամը 1553 թ.¹⁵։ Ըստ Դերնշվամի քրիստոնյա, թուրքախոս, հունարեն չիմացող և կարամանոս (Caramanos) անունով հայտնի համայնքը բնակվում է Ստամբուլի Յեդիքուլե թաղամասում և այնտեղ է տեղափոխվել Կարամանից¹⁶։ Կա տեսակետ, որ թուրքախոս ուղղափառներին տրվել է կարամանցի հույներ անվանումը, քանի որ նրանք ապրել են Անատոլիայում գտնվող Կարամանի վիլայեթում¹⁷։

Սակայն կարամաններն իրենք իրենց կարաման չեն կոչել։ Իրենց գրավոր աշխատանքների մեջ իրենց կոչում են «Անատոլիայի քրիստոնյաներ», «Անատոլիայի ուղղափառ քրիստոնյաներ», «Անատոլիայի հույներ» կամ էլ ուղղակի անատոլիացիներ¹⁸։ Թուրքախոս ուղղափառները խուսափել են «կարաման» անվան կիրառումից, քանի որ այդ ժամանակահատվածում այն ունեցել է արհամարհական, նվաստացուցիչ, այլ կերպ ասած, բացասական երանգավորում¹⁹։

Կարամանների ծագման հետ կապված 2 հակադիր տեսակետ կա։ Համաձայն առաջին տեսակետի կարամանները սոցիալական, տնտեսական և քաղաքական պատճառներից ելնելով ժամանակի

¹⁴ Ekşi P., Karamanlı edebiyatının tarihsel gelişimi, Akademik Sosyal Araştırmalar Dergisi, Yıl 2, Sayı 2/1, 2014, s. 281.

¹⁵ Նույն տեղում, էջ 281։

¹⁶ Ağca F., նշվ. աշխ., էջ 4։

¹⁷ Anzerlioğlu Y., նշվ. աշխ., էջ 138։

¹⁸ Ekşi P., նշվ. աշխ.։

¹⁹ Balancar F., Cumhuriyet'in 'Hristiyan Türkler'le imtihanı, <http://www.agos.com.tr/tr/yazi/16941/cumhuriyetin-hristiyan-turklerle-imtihani>, 03.04.2019

ընթացքում թուրքացած հույներն են²⁰: Երկրորդ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ կարամանները սելջուկյան ժամանակաշրջանում բյուզանդական բանակում ծառայող և ժամանակի ընթացքում քրիստոնյա դարձած վարձկան թյուրքերի թոռներն են²¹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թյուրքերը Փոքր Ասիա գալուց ի վեր վարել են ոչ թուրք ժողովուրդների ձուլման քաղաքականություն և համեմատություն անցկացնելով նաև օսմանահպատակ հայ ժողովրդի պատմության հետ, առավելապես հակվում ենք այն տեսակետին, որ կարամանները եղել են հույներ, խոսել են միայն թուրքերեն, բայց կրոնական պատկանելիությունից ելնելով չեն կիրառել արաբական գիրը, այլ գրել են հունարեն այբուբենի տառերով:

Լոզանի պայմանագրի (կնքված 1923 թ. հուլիսի 24-ին) համաձայն 1923 թ. Թուրքիան և Հունաստանը իրականացրին բնակչության փոխանակում²², որը հիմնված էր ոչ թե էթնիկական այլ կրոնական պատկանելիության վրա, ինչի արդյունքում էլ Թուրքիայից արտաքսվեց ողջ ուղղափառ բնակչությունը, չնայած որ նրանց մեծ մասը արդեն վաղուց մոռացել էին հունարենը և խոսում էին միայն թուրքերեն²³: Մրա պատճառներից մեկը այն էր՝ պետությունը մարդկանց տարբերում էր ոչ թե էթնիկական և լեզվական, այլ կրոնական պատկանելիությամբ²⁴: Այս պատճառով այլ ուղղափառ քրիստոնյաների հետ հույն համարվելով՝ կարամանները ևս ենթարկվեցին բնակչության փոխանակման և ուղարկվեցին Հունաստան: Տեղափոխությունից հետո կարամաններն իրենց օտար են զգացել Հունաստանում,

²⁰ Ekşi P., նշվ. աշխ.:

²¹ Նույն տեղում:

²² Սաֆրասյան Ռ., Մելքոնյան Ռ., Թուրքիայի հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 94:

²³ Չոբանյան Գ., Հունական համայնքի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության շարունակությունը հանրապետական Թուրքիայում, <http://akunq.net/am/?p=19800>, 10.03.2019

²⁴ Öztürk F., The Ottoman Millet Systems, p. 72, <http://dergipark.gov.tr/download/article-file/12937>

հույները նրանց համարել են «կիսաքրիստոնյա», «սև լեզու ունեցող», «կարաման», «մարդիկ, ովքեր արժանի չեն հույն կոչվելու»:

Կարամաններն Օսմանյան կայսրությունում բնակվելիս՝ 16-20-րդ դարի սկիզբ ընկած ժամանակահատվածում ստեղծել են հարուստ գրականություն՝ գրված հունաստառ թուրքերեն, որը կոչվում է նաև կարամաներեն, կարամանյան թուրքերեն կամ կարամանլիդիկա:

Թուրքախոս կարամանների կողմից գրավոր լեզվում հունական այբուբենի կիրառության որոշակի պատճառներ կարելի է առանձնացնել: Նախևառաջ պետք է նշել ֆորմալ կրթության բացակայության հանգամանքը: Կայսրությունում տեղական և կրոնական համայնքներն իրենք էին կազմակերպում իրենց կրթությունը և չկար որևէ սահմանափակում կիրառելու գրային տարբեր լեզուներ: Հաջորդ պատճառն այն է, որ հնուց ի վեր թուրքախոս ուղղափառները կիրառել են հունական այբուբենը²⁵: Ինչպես արդեն նշեցինք, ուղղափառ մուսուլմանների կողմից սրբացվում էին այն լեզուն և գիրը, որով գրվել էր Ղուրանը, այսինքն ուղիղ կապ կար կրոնի և գրավոր լեզվի միջև: Հանդիպում ենք նաև հետևյալ կարծիքին, որ արաբական հարֆերը իսլամի սիմվոլները չեն, և եթե այդպես լիներ, ապա սիրիացի և Մերձավոր Արևելքի քրիստոնյաները չէին կիրառի դրանք իրենց գրավոր լեզվում: Հետևաբար արաբական հարֆերի փոխարեն հունական տառերի կիրառումը կապվում է այն հանգամանքի հետ, որ Աստվածաշունչը գրվել է հունարենով²⁶: Ինչպես տեսնում ենք, երկու պարագայում էլ ակնհայտորեն բխվում ենք գրերի սակրալության գաղափարի հետ: Եվ ի վերջո, այս ամենից կարելի է հանգել այն եզրակացության, որ երկու պարագայում էլ գործ ունենք սուրբ գրքերում կիրառված գրերի հետ, որոնք և սրբացվում են երկու դավանանքների ներկայացուցիչների կողմից,

²⁵ Korat G., Karamanlca konusu, <http://www.gurselkorat.com/2007/04/karamanlca-konusu.html>, 29.03.2019

²⁶ Նույն տեղում:

ինչից էլ բխում է այն, որ թուրքախոս լինելով հանդերձ՝ կարամանները գրային լեզվում կիրառել են հունական այբուբենը:

Նշենք, որ կարամաներեն գրականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում հունարենից թարգմանված գրքերը, որոնց մեծ մասը ունեն կրոնական բովանդակություն: Գրքերի թարգմանիչների նպատակը այս ճանապարհով Փոքր Ասիայի քրիստոնյաներին իրենց կրոնական պարտականություններին և եկեղեցական դոգմաներին ծանոթացնելն էր: Բացի այդ, եկեղեցիներում կատարվող արարողությունները, կարդացվող աղոթքները չէր հասկանում ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլև քահանաները, ինչը և առաջ էր բերում կարամանիդիկայով գրված գրքերի հույժ անհրաժեշտության²⁷:

Հոդվածի առաջին հատվածը ամփոփելով՝ նշենք, որ հայատառ և հունատառ թուրքերեն գրականության ձևավորումը հայ և հույն ժողովուրդների նկատմամբ իրականացված թուրքացման, իսլամացման քաղաքականության արդյունք էր և հավելենք հայկական և հունական այբուբենները թուրքերենի գրության համար ամենաշատը կիրառված այբուբեններից են: Հայատառ և հունատառ թուրքերենով մեզ են հասել ձեռագիր և տպագիր գրականության մի շարք նմուշներ: Այս հարուստ գրականության մասն են կազմում ինքնուրույն, թարգմանական գրականության նմուշները և մամուլի հարուստ հավաքածուները: Հայատառ և հունատառ թուրքերեն գրականությունը 20-րդ դարի սկզբներին Օսմանյան կայսրության տարածքում աստիճանաբար նվազում և վերջնականապես դադարում է գոյություն ունենալ, ինչը կապված էր նախ հայ ժողովրդի թուրքախոս հատվածների՝ լուսավորական շարժման շնորհիվ հետզհետե պարտադրյալ թուրքախոսությունից հրաժարվելու և մայրենիի կիրառմանը վերադառնալու, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հետ: Լոզանի պայմանագրի համաձայն իրականացված բնակչության փոխանակությունից

²⁷Balta E., Karamanlıca Kitapların Dönemlere Göre İncelenmesi ve Konularına Göre Sınıflandırılması, Müteferrika, sayı 13, 1998, s. 11, https://www.evangelialbalta.com/kitap/20_review.pdf,

հետո թուրքախոս ուղղափառ հույները ևս ստիպված եղան տարագրվել: Հայերը և հույները իրենց նոր բնակության երկրներում որոշ ժամանակ չեն դադարեցնում հայատառ և հունատառ թուրքերեն գրականության տպագրությունը: Հայատառ թուրքերենի տպագրությունը տևում է շատ ավելի երկար, քան կարամանլիդիկայինը: Ի վերջո, 1935 թ. վերջնականապես դադարում է կարամաներեն, իսկ 1968 թ. հայատառ թուրքերեն գրականության տպագրությունը:

Հոդվածի երկրորդ հատվածում հայատառ և հունատառ տեքստերից վերցված օրինակների միջոցով տեսնենք հայոց և հունաց այբուբենների գործածությունը թուրքերենի գրության մեջ:

Հայատառ, ինչպես նաև հունատառ թուրքերեն գրական հուշարձաններում արտացոլված է ժամանակի թուրքերեն խոսակցական լեզուն և, կարելի է ասել՝ ամբողջությամբ բացահայտում է թուրքերենի հնչյունական առանձնահատկությունները՝ ի տարբերություն արաբական գրի:

39 տառերից բաղկացած հայոց այբուբենը իր կազմով ամբողջական է՝ մեկ հնչյունին համապատասխանում է մեկ տառ²⁸: Այն ճշգրիտ արտահայտում է թուրքական հնչյունները՝ ի տարբերություն արաբական, լատինական և այլ այբուբենների²⁹:

Հունարենի այբուբենը ունի 24 տառ: Տառերը մեծ մասամբ, բայց ոչ ամբողջովին, համապատասխանում են թուրքերենի հնչյունական համակարգին: Պետք է նշել նաև, որ հունատառ թուրքերեն բոլոր գործերում միննույն հնչյունի համար նույն տառը կամ տառակապակցությունը չի կիրառվում: Տարբեր տեղերում կարելի է հանդիպել միննույն հնչյունն արտահայտելու համար կիրառված տարբեր տառեր ու տառակապակցություններ³⁰:

²⁸ Գիր և այբուբեն, Հայկական հանրագիտարան, <http://www.encyclopedia.am/pages.php?hId=1076>

²⁹ Сафарян Ал., Адилбаев Ж., Об армянско-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном// Хабаршы-Вестник, № 1 (110), ЕНУ им. Гумилева Л. Н., Астана, 2016. с. 115.

³⁰ Çakmak C., Karamanlı Türkçesine Genel Bir Bakış Denemesi, 1. Uluslararası Nevşehir Tarih ve Kültür Sempozyumu Bildirileri, 2. Cilt, 1. Baskı, Ankara, 2012, s. 199.

Թուրքերենի հնչյունական համակարգը ունի 31 հնչյուն: Հետևաբար, հունական այբուբենի 24 տառերը բավական չեն բոլոր հնչյունները արտահայտելու համար, այդ իսկ պատճառով թուրքախոս ուղղափառները «տառային զույգեր» են օգտագործել բոլոր հնչյունները արտահայտելու համար³¹: Բացի այդ թուրքերենում եղած այնպիսի հնչյունները, ինչպիսիք են c [ջ], ç [չ], h [հ], ı [ը], j [ժ], ö [քմային օ], ş [շ] և ü [քմային ու] հնարավոր չէր արտահայտել նոր հունարենի այբուբենի մեկ տառի միջոցով: Օրինակ՝ c-ն արտահայտվում է τζ տառակապակցության միջոցով, b-ն՝ μπ, π, ππ, μ-ի միջոցով: Բացի դրանից, մեկ այլ երևույթ ևս նկատելի է. հունարեն այբուբենով գրված հին տեքստերում b, d և g տառերը հիմնականում արտահայտվել են p (π), t (τ, υ), և k (χ) տառերի միջոցով³²: b, d և g հնչյունների հետ կապված նմանատիպ երևույթ նկատելի է նաև հայատառ թուրքերենում, որ գրվել է արևմտահայերի կողմից և հետևաբար արևմտահայերեն հնչյունաբանությամբ, և, չնայած նրան, որ հայոց այբուբենում կան առանձին տառեր «բ», «դ» «գ» ձայնեղները արտահայտելու համար, այնուամենայնիվ դրանք արտահայտվել են համապատասխանաբար «պ», «տ», «կ» խուլ բաղաձայնների միջոցով, ինչը սակայն որևէ կերպ չի ազդում նրանց՝ որպես ձայնեղ արտանսանվելուն:

Լամարթինի «Գրացիելլայի» հայատառ թուրքերեն թարգմանությունից բերված օրինակում տեսնեք հայոց գրերի կիրառությունը. «Պու էսնալերտե, վալիտե թարաֆընտան եագըն ագրապալարըմտան օլան պիր գատըն, գելճինին պագը ումուրու մէսալիի գըմընտա Իթալեատան չըդըրլմըշ օլմասըլա, տէր հալ Թօսգանա էյալէթինէ ազիմէփ իթմէք իւզրէ թէտարիքտէ իտի...»³³ («Bu esnalerde, valide tarafından yakın akrabalarımın olan bir kadın, zevcinin bazı umurlu mesalih zımında İtalya'dan çıғırılmış olmasıyla, der hal Tosgana eyaletine


³¹Berkol B, 133 Yıl Önce Yayımlanan Yunan Harfleri İle Türkçe (Karamanlîca) Bir "Robinson Crusoe" Çevirisi, s. 138, <http://dergipark.gov.tr/download/article-file/101120>

³² Çakmak C., նշվ. աշխ., էջ 197-198:

³³ Մէօսիէօ տը Լամարթին, Կրագիէլլա-Գրացիէլլա, Իստանպուլ, Մաթապալը Սամուէլ Ղ. Պարտիզպանեան, 1871, էջ 7:

azimep itmek üzere tedarikte idi”): Ինչպես տեսնում ենք այս օրինակում, “b” “d” ձայնների համար կիրառվել են համապատասխանաբար «պ» (պու, պիր, պազը և այլն) և «տ» (եսնալերտե, վալիտե, գատըն և այլն) խուլերը: Օրինակում տեսնում ենք նաև շնչեղ խուլ “k”-ի («ք») համար և՛ «գ» ձայնեղի կիրառությունը՝ եազըն, գատըն, և՛ «ք» շնչեղ խուլի՝ իթուլք, թէտարիքտե: Հավելենք, որ հայերեն «ե» տառը բաղաձայնից առաջ կարդացվում է e (է), իսկ ձայնավորից առաջ՝ y (յ): Վերջինս ևս երևում է օրինակում՝ եազըն: Ինչ վերաբերում է հ, ի տառերին, ապա դրանք կարդացվում են h (հ), j տառը ևս, եթե բռնասկզբում է, կարդացվում է «h»:

“Angeliaforos-Çocuklar İçin” («Ավետաբեր երեխաների համար») ամսագրից բերված օրինակում էլ տեսնենք հունատառ թուրքերենում հունարենի այբուբենի կիրառությունը.




Նկ. 1. Հատված հունատառ թուրքերեն “Angeliaforos -Çocuklar İçin” ամսագրից

“Demir yolunda yolculuk edenler alesseviye (bir seviyede) rahat giderlerö ve lakin bazı defa bindikleri arabalar yolun asil demirinden çıkıp parça parça olur”³⁴: Այս օրինակում երևում է, որ թուրքախոս ուղղափառները “d” հնչյունը արտահայտելու համար կիրառել են տառը,

³⁴ Çetin Y., Karamanlıca Çeviri: Angeliaphoros Çocuklar İçin: Küçük Günahlar, http://yasinetin.blogspot.com/2016/12/karamanlca-ceviri-angeliaphoros_10.html, 17.04.2019

սակայն գլխին կետ ավելացնելով: Կետի միջոցով են արտահայտվել նաև “b”, “g”, “s” և “g” տառերը՝ կետ ավելացնելով համապատասխանաբար π, κ, σ և χ տառերին: Նշենք նաև, որ “b” հնչյունի համար տարբեր տեքստերում նկատելի է նաև π-ի կիրառությունը: Օրինակ՝ *πιρᾶτερι*-*pirateri*<*biraderi*³⁵ (այս դեպքում նմանվում է հայատառ թուրքերենի գրությանը, երբ «պ» տառը արտասանվում է «բ»):




Նկ. 2. Հատված հայատառ թուրքերեն «Աւետաբեր չօճուզլար իչին» ամսագրից

«Աւետաբեր չօճուզլար իչին»³⁶ ամսագրից բերված օրինակում ևս երևում է շնչել խուլ «ք»-ի փոխարեն «զ» ձայնեղի (գուլէսի, գրզը, տիզգաթ, սագընսընլար), «բ» ձայնեղի փոխարեն «պ» խուլի (պէքճիսինին, պիր, պապասը, պուլունան), «դ» ձայնեղի փոխարեն «տ» խուլի (իսմինտե, գուլէսինտե, իտիլէր, էտէր իտի, տէնիզի, թաշլարտան), «զ» ձայնեղի փոխարեն «կ» խուլի (կէճէլէրի, կէչէն կէմիճիլէր, գէօրիւպ) կիրառությունները: Հատվածում արտահայտված են թուրքերենի բոլոր ձայնավորները՝ **a**-Մարիամ, պապասը, **ı**-ըըըը, սագընսընլար, **e**-իսմինտե, ֆէնէր, կէչէն, **i**-իսմինտե, իտի, **o**-օրատան, **u**-պուլունան, **ö**-կէօրիւպի, **ü**-քիւշիւք:

³⁵ Kültürel Z., Grek Harfli Karamanlica Kitabelerdeki Alinti Ögeleri Üzerine, Turkish Studies, Vol. 9/9, Ankara, 2014, s. 42.

³⁶ Աւետաբեր չօճուզլար իչին, Ն. 2, 1873, էջ 8:



Նկ. 3. Հատված “Anatol Ahteri” պարբերականից

“Anatol Ahteri” պարբերականից բերված հատվածում³⁷ ևս երևում է, որ պակասող հնչյունների համար բացի տառակապակցություններից կիրառվել են որոշակի նշաններ, ինչպես «շ» հնչյունի համար կետիկով ժ-ի, «բ» հնչյունի համար կետիկով π-ի կիրառությունները: Բացի այդ, միևնույն հնչյունի համար հանդիպում է երկու տարբեր տառերի կիրառություն՝ γ և ι (οκουγιαδζαγμηζα-okuyacagımiza, αϊδά-ayda), որոնք երկուսն էլ արտահայտում են «յ» հնչյունը:

Հավելենք, որ հունարենի այբուբենում կան տառեր, որոնք չեն կիրառվել կարամանլիդիկայի գրության համար, քանի որ թուրքերենում չկան դրանց արտահայտած հնչյունները: Այդ տառերն են Ψφ (փսփ), Ξ ξ (քսի), Θ θ (թիտա, որը նոր հունարենում անգլերենի th տառակապակցության նման է հնչում, or, think, thin)³⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայոց և հունաց գրերը հնարավորություն են տալիս արտահայտել թուրքերենի բոլոր հնչյունները: Ճիշտ է, ոչ բոլոր հնչյուններին են առանձին տառեր համապատասխանում, այնուամենայնիվ երկու դեպքում էլ տեսանելի է տառակապակցությունների միջոցով բաց մնացած հնչյունների արտահայտումը: Ինչպես տեսանք, հայոց այբուբենը, ամեն հնչյունի

³⁷ Yunan Harfli Türkçe: Letaif (Latifeler) 1 Eylül 1886, <https://yasinetin.blogspot.com/2017/07/yunan-harfli-turkce-letaiflatifeler-1.html>

³⁸ Çakmak C., նշվ. աշխ., էջ 198:

համար մեկ առանձին տառի առկայության շնորհիվ, շատ ավելի լավ է արտահայտում թուրքերենի հնչյունական համակարգը, քան հունարենի այբուբենը:

**SONA MINASYAN
(YSU)**

**THE PREREQUISITES FOR THE FORMATION OF THE
ARMENO-TURKISH AND THE KARAMANLIDIKA
LITERATURE: THE USE OF THE ARMENIAN AND GREEK
ALPHABETS IN ARMENO-TURKISH AND
KARAMANLIDIKA TEXTS**

This article set out to prove the formation of the Armeno-Turkish and the Karamanlidika literature was the result of Turkification and Islamization policy towards the Armenian and the Greek people. There are a lot of samples of manuscripts, printed literature and rich collection of media in Armeno-Turkish and Karamanlidika. At the beginning of the 20th century the Armeno-Turkish and the Karamanlidika literature gradually declined and ceased to exist due to the enlightenment movement of the Turkish-speaking segments of the Armenian people, the gradual refusal of forced Turkish-speaking and the return to the usage of the native language. Turkish speaking Greek people stopped the printing of the Karamanlidika literature after moving to Greece. Thus, it should be concluded that the Armenian and the Greek alphabets allow expressing all the sounds of the Turkish language. Not all sounds correspond to separate letters; there are a lot of sounds that are expressed by using two and more letters. Finally, the Armenian alphabet, thanks to the presence of a single letter for each sound, expresses the Turkish phonetic system much better than the Greek alphabet.